

**Երրորդ փուլ.** 1990 թվականին արդյունաբերական սպառողներն իրավունք ստացան ընտրել գազի մատակարարին:

**Չորրորդ փուլ.** 1992-1994 թվականներին սկիզբ դրվեց բնական գազի բորսային մեծաքանակ առևտրի իրականացմանը և սփոթ շուկայի (spot market) զարգացմանը:

**Հինգերորդ փուլ.** 1995 թվականին ընդունվեց գազի մասին օրենքը, և տեղի ունեցավ British Gas-ի բաժանումը երկու մասի՝ տեղափոխող և պահեստավորող (BG Transco և BG Storage) և իրացնող ընկերությունների (Centrica), արդյունքում՝ ստեղծվեցին պայմաններ ներքին շուկայում մրցակցության համար:

**Վեցերորդ փուլ.** 1998 թվականին տեղի ունեցավ գազի միջազգային առևտրի աշխուժացում, աճեցին ինչպես գազի ներմուծման, այնպես էլ Interconnector համակարգի միջոցով Եվրոպա արտահանման ծավալները: Գազի շուկան լրիվ ազատականացվեց:

Նշված փոփոխությունները հանգեցրին.

- գազի մրցակցային շուկայի ձևավորմանը,
- պետության ներսում գնի իջեցմանը (շահեց սպառողը),
- մենաշնորհային դիրքի նվազմանը,
- գազամատակարարի ընտրության հնարավորությանը,
- գազի սպառման ծավալների աճին,
- ներդրումների ծավալների ավելացմանը,
- գազի բորսային առևտրի իրականացմանը և սփոթ շուկայի զարգացմանը<sup>1</sup>:

Բնական գազի պաշարներով ներկայումս Ռուսաստանի Դաշնությունը գերազանցում է աշխարհի բոլոր երկրներին, որին գազի պաշարներով հաջորդում են Իրանը, Կատարը ԱՄՆ, Վենեսուելան, ՄԱԷ-ը, Սաուդյան Արաբիան, Թուրքմենստանը, Ալժիրը և Նորվեգիան: Բնական գազի արտահանմամբ Ռուսաստանի Դաշնությունը ևս աշխարհում գրավում է առաջին տեղը, այնուհետև հետևում են ԱՄՆ-ն, Կանադան, Մեծ Բրիտանիան, Ալժիրը, Ինդոնեզիան, Նիդերլանդները, Իրանը, Սաուդյան Արաբիան և այլն<sup>2</sup>:

Այսպիսով՝ գազի արդյունահանման, գազամատակարարման և գազաբաշխման, ինչպես նաև գազի շուկայի հետ կապված հիմնահարցերը բավականին շատ են: Դրանք անընդհատ գտնվում են դինամիկ զարգացման գործընթացում, իսկ Հայաստանի Հանրապետությունն այդ հարաբերությունների համակարգում չնչին դեր ունի, չունենալով բնական գազի պաշարներ այդ հարաբերությունների համակարգում այն ներկայանում է միայն որպես գնորդ: Այնուամենայնիվ, միջազգային փորձի ուսումնասիրությունը հստակեցնում է գազի շուկայում դիտարկվող միտումներն ու փոփոխությունները, որոնց իմացությունը կարող է հիմք հանդիսանալ գազամատակարարման համակարգի զարգացման և միջազգային կազմակերպությունների (էներգետիկական) հետ արդյունավետ համագործակցության եզրեր գտնելու հարցերում:

## ԿԱՐԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱՄ Մ.Քոբանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

## ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՇՈՒԿԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Էներգետիկայի և գազի համակարգերը շատ պետություններում հանդիսանում են բնական մենաշնորհ: Այդ համակարգերը համարվում են խոշոր հարկատուներ, միաժամանակ դրանց զարգացվածության մակարդակն անմիջական ազդեցություն է թողնում տնտեսության մյուս ճյուղերի գործունեության վրա: Դա է պատճառը, որ այդ շուկաների զարգացման նպատակների և ուղղությունների ձևավորման ու իրականացման հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում պետության մասնակցությունն այդ գործընթացին: Պետության մասնակցությունը բացատրվում է նաև անխափան էներգամատակարարման և գազամատակարարման, ինչպես նաև դրանց հուսալիության և անվտանգության համար պատասխանատվությամբ, ուստի՝ պետությունը ստեղծում է պայմաններ և կիրառում ազդեցության լծակներ՝ էներգակիրների շուկայի ձևավորման և արդյունավետ գործունեության համար:

Գազի շուկայի զարգացման համար պետության մասնակցությունը նախատեսում է ստեղծել համապատասխան ֆինանսատնտեսական պայմաններ (սակագնային, հարկային և դրամավարկային քաղաքականության, սոցիալական և հակամենաշնորհային քաղաքականության, բնապահպանության և այլն), անհրաժեշտության դեպքում օգտագործել կարգավորման և հսկողության արդյունավետ գործիքներ: Ստեղծելով զարգացման պայմաններ, ցուցաբերելով աջակցություն, ինչպես նաև ձևավորելով գազի շուկայում գործունեության կանոնները (օրենքների, որոշումների, կանոնակարգերի միջոցով), պետությունը չպետք է ուղղակի միջամտի գազի շուկայի սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությանը՝ դրանց թողնելով ինքնուրույնաբար որոշել իրենց գործունեության արդյունավետ ուղղությունների իրականացման ձևերը և գնային քաղաքականությունը:

<sup>1</sup> Ա.Մնացականյան, Բնական գազի շուկայի մոդելի ընտրությունը որպես ներդրումների ներգրավման գործոն, Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, N2-3 (37-38), փետրվար – մարտ 2004, էջ 89:

<sup>2</sup> Ս.Սարգսյան, Գազի երկրորդ զարկերակը, Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, N2, օգոստոս 2001, էջ 11:

Հայաստանի Հանրապետության բնական գազի շուկան, իր մենաշնորհային կառուցվածքով, գտնվում է բազմաթիվ գործոնների ազդեցության ներքո, իսկ վերջիններիս համալիր ներգործությունից ծնունդ են առնում, ինչպես բնական գազի միջազգային շուկաների զարգացման մոդելների ընտրության, այնպես էլ այդ շուկաներում ներդրումների ուղղությունների ու ֆինանսական խնդիրների առաջադրման բազմաթիվ հայեցակարգեր և մոտեցումներ:

Նախ նշենք, որ չնայած նրան, որ «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը, հանդիսանալով առևտրային կազմակերպություն, մշակել և իրականացնում է եռամյա ներդրումային ծրագրեր, որոնցով ապահովում է ընկերության տնտեսական շահագրգռվածությունը շահույթի ստացման ուղղությամբ, Հայաստանի Հանրապետությունը, որպես «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր և էներգետիկայի ոլորտի քաղաքականություն մշակող և այդ ոլորտը վերահսկող՝ իր ծրագրերով, որոնցով լուծում է նաև Հայաստանի Հանրապետությունում համայնքային զարգացման (համահարթեցման) և սոցիալական խնդիրներ, «ստիպում է» «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ծրագրերում տեղ հատկացնել նաև իր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներին: Որպես օրինակներ կարելի է նշել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի մայիսի 20-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով<sup>1</sup>, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Գյուղական համայնքների անապահով ընտանիքների զազամատակարարման ապահովման միջոցառումների ծրագրի մասին» թիվ 584-Ն որոշմամբ<sup>2</sup> մի շարք միջոցառումների իրականացնող պատասխանատու «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը ճանաչելը:

Այժմ ներկայացնենք «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրերն ու դրանց կատարման ընթացքը:

«ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականի տարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2005-2007 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել զազափոխադրման և զազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և կորուստների նվազեցման նպատակով: Ներդրումներ էր նախատեսված իրականացնել նաև այդ համակարգերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենաների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի և տնտեսական գույքի ու գործիքների ձեռքբերման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2005-2007 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն էր տվել իր 2005 թվականի փետրվարի 9-ի թիվ 12-Ա որոշմամբ<sup>3</sup>: Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2005-2007 թվականի ընթացքում իրականացնել 21562,0 մլն դրամի ներդրումներ, որից 6679,7 մլն դրամի ներդրումները՝ 2005 թվականի ընթացքում: Այնուհետև, համաձայն հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 10-ի թիվ 72-Ա որոշման<sup>4</sup>, Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման 11721,9 մլն դրամ ներդրումների ընդհանուր ծավալ ունեցող ծրագրի իրականացումն սկսելու նպատակով, 2005 թվականի ներդրումների ծավալը ավելացել և կազմել է 8673,2 մլն դրամ:

Այսպիսով, փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականի ներդրումային ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղկացուցիչներից՝

1. զազափոխադրման և զազաբաշխման համակարգերում ներդրումներ՝ 6619,8 մլն դրամ,
2. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և արդիականացում՝ 2053,4 մլն դրամ:

Վերը նշված բոլոր դրամային ծավալները, ինչպես նաև սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Ներդրումային ծրագրի երկրորդ բաղկացուցիչի ուղղությամբ ընկերությունը 2005 թվականի ընթացքում իրականացրել է 5,6 մլն դրամի ներդրումներ, միևնույն ժամանակ 86,0 մլն դրամի անավարտ աշխատանքներ:

Գծապատկեր 1-ում ներկայացված է «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականի ներդրումային ծրագրի առաջին բաղադրիչի ներդրումների ծավալի բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, ներդրումային հիմնական գերակայությունը զազաբաշխման համակարգի ընդլայնումը և նոր բաժանորդների միացումն է. այն կազմում է 2005 թվականին նախատեսված ներդրումների ծավալի 73,1%-ը:


Գազափոխադրման և զազաբաշխման համակարգերի վերակառուցման և վերազինման նպատակով նախատեսվում է կառուցել նոր միջին և բարձր ճնշման զազատարներ, փոխարինել կամ վերատեղադրել դրանց վթարային հատվածները, կառուցել կամ վերականգնել առկա էլեկտրապաշտպանիչ կայանները, ինչպես նաև կառուցել նոր զազաբաշխիչ կայաններ, տեղադրել գծային փականներ, արդիականացնել հաշվառման համակարգը և այլն:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N22.1, 01.07.2002:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N29(484), 31.05.2006:

<sup>3</sup> Հանդիսանալով անհատական իրավական ակտ՝ չի հրապարակվել:

<sup>4</sup> Հանդիսանալով անհատական իրավական ակտ՝ չի հրապարակվել:



**Գծապատկեր 1. «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականի ներդրումային ծրագրի առաջին բաղադրիչի ներդրումների ծավալի բաշխումը հիմնական ուղղությունների միջև<sup>1</sup>**

Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել այլ ուղղություններով ևս, մասնավորապես, շենքերի և շինությունների վերակառուցման, մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի ձեռքբերման, ինչպես նաև վթարային ծառայության և հրդեհային անվտանգության տեխնիկայի համալրման և կապի համակարգի բարելավման նպատակով:

Ներդրումային նախագծի տնտեսական արդյունավետության գնահատումը մինչև ներդրումային հետազոտության ամենապատասխանատու փուլերից մեկն է<sup>2</sup>: «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքների գնահատման նպատակով սույն աշխատանքում դիտարկված է ընկերության կողմից 2005 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված ներդրումները և ըստ ուղղությունների ներկայացված է ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշների գնահատականը: Հարկ ենք համարում նշել, որ ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները գնահատելիս ընկերության կողմից իրականացված ներդրումներ են համարվել 2005 թվականի ընթացքում լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված օգտակար և օգտագործվող նոր ակտիվների արժեքը: Պետք է ի նկատի ունենալ, որ այդ ակտիվների կառուցման ծախսերը կարող են ամբողջությամբ իրականացված լինել ինչպես հաշվետու տարվա ընթացքում, այնպես էլ մասնակիորեն դրան նախորդող ժամանակահատվածի ընթացքում և չահագործման հանձնված լինել հաշվետու տարում: Ուստի այդ ակտիվների արժեքը չի բնորոշում ընկերության կողմից տվյալ տարվա ընթացքում ներդրումների իրականացման նպատակով ներգրավված ֆինանսական միջոցների չափը:

Միևնույն ժամանակ իրականացված ներդրումների ծավալում չի ներառվել անավարտ մնացած աշխատանքների կամ չահագործման չհանձնված ակտիվների արժեքը, քանի որ դրանք դեռևս չեն մասնակցում լիցենզավորված գործունեության իրականացմանը և ազդեցություն չեն կարող ունենալ ընկերության գործունեության ցուցանիշների վրա: Բացի նշվածը, սույն վերլուծական տեղեկանքում չեն դիտարկվել 2005 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված ներդրումները, քանի որ դրանք գնահատման առարկա չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները դիտարկելիս: Այդ ներդրումների կառուցվածքում առկա են եղել երկու բաղադրիչներ՝ 2004 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում սկսված, սակայն անավարտ մնացած աշխատանքների նպատակով իրականացված ներդրումներ և ներդրումներ, որոնք ներառված չեն եղել ընկերության 2004 կամ 2005 թվականների ներդրումային ծրագրերում:

Փաստացի կատարված ներդրումների վերաբերյալ տեղեկատվության համաձայն, «ՀայՌ-ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը 2005 թվականին ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացրել է 8089,0 մլն դրամի ներդրումներ և ևս 1337,3 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ: Իրականացված ներդրումների ծավալի բաշխումը ներդրումային ծրագրի ուղղությունների միջև ներկայացված է աղյուսակ 1-ում:

<sup>1</sup> Գծապատկերի համար հիմք է հանդիսացել «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, վերլուծական տեղեկանք, ՀՀ Հանրային ծառայությունները կանոնակարգող հանձնաժողով, Երևան 2006:

<sup>2</sup> Դուլչյան Հ., Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ. - Եր., Տնտեսագետ, 2002, էջ 223:

**«ՀայՌուսագաղարդ» փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականին իրականացված ներդրումների ծավալի բաշխումը ներդրումային ծրագրի ուղղությունների միջև<sup>1</sup>**

| N               | Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը          | 2005 թ. ներդրումների կանխատեսվող ծավալը |              | 2005թ. փաստացի կատարված ներդրումների ծավալը |              | Տվյալ ուղղության կատարման ցուցանիշը |
|-----------------|-------------------------------------------------------------|-----------------------------------------|--------------|---------------------------------------------|--------------|-------------------------------------|
|                 |                                                             | մլն դրամ                                | %            | մլն դրամ                                    | %            | %                                   |
| 1.              | Արժույթի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում    | 2 053,4                                 | 23,7         | 5,6                                         | 0,1          | 0,3                                 |
| 2.              | Գազափոխադրման համակարգի վերակառուցում և վերազինում          | 284,7                                   | 3,3          | 173,7                                       | 2,1          | 61,0                                |
| 3.              | Գազափոխադրման համակարգում կորուստների նվազեցում             | 43,5                                    | 0,5          | 0,0                                         | 0,0          | 0,0                                 |
| 4.              | Գազափոխադրման համակարգում ներդրումներ այլ ուղղություններով  | 273,2                                   | 3,1          | 33,2                                        | 0,4          | 12,1                                |
| 5.              | Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում | 4 837,7                                 | 55,8         | 6 484,1                                     | 80,2         | 134,0                               |
| 5.1.            | գազաբաշխման համակարգի ընդլայնում                            | 1 837,7                                 | 21,2         | 3 911,2                                     | 48,4         | 212,8                               |
| 5.2.            | նոր բաժանորդների միացում                                    | 3 000,0                                 | 34,6         | 2 572,9                                     | 31,8         | 85,8                                |
| 6.              | Գազաբաշխման համակարգի վերակառուցում և վերազինում            | 588,8                                   | 6,8          | 877,1                                       | 10,8         | 149,0                               |
| 7.              | Գազաբաշխման համակարգում կորուստների նվազեցում               | 131,4                                   | 1,5          | 145,9                                       | 1,8          | 111,0                               |
| 8.              | Գազաբաշխման համակարգում ներդրումներ այլ ուղղություններով    | 460,5                                   | 5,3          | 369,4                                       | 4,6          | 80,2                                |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |                                                             | <b>8 673,2</b>                          | <b>100,0</b> | <b>8 089,0</b>                              | <b>100,0</b> | <b>93,3</b>                         |

Այսպիսով, ամփոփելով ՀայՌուսագաղարդ» փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքները պետք է փաստել՝

1. ընկերությունը 2005 թվականի ընթացքում ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացրել է 8089,0 մլն դրամի ներդրումներ՝ նախատեսված 8673,2 մլն դրամի փոխարեն,
2. գազաբաշխման համակարգի ընդլայնման և նոր բաժանորդների միացման նպատակով 4837,7 մլն դրամի ներդրումների փոխարեն ընկերությունն իրականացրել է 6 484,1 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 2005 թվականի ավարտին գազի բաշխման ցանցին միանալու հնարավորություն ունեցող բնակիչների թիվը կազմել է 532000 և դրանցից 360000-ն արդեն միացված են եղել գազի բաշխման ցանցին հանդիսանալով բաժանորդներ: Միևնույն ժամանակ նախատեսված 619,1 կմ գազատարների փոխարեն կառուցվել են 668,3 կմ գազատարներ,
3. ընդհանրապես ներդրումներ չեն կատարվել գազափոխադրման համակարգում կորուստների նվազեցման ուղղությամբ: Բավական ցածր է մաս Արժույթի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի և գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացված ներդրումների ծավալը:
4. ընկերության 2005 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 93,3%-ով, իսկ ներդրումային ծրագրի հիմնական գերակա ուղղությունը՝ գազաբաշխման համակարգի ընդլայնման և նոր բաժանորդների միացման նպատակով նախատեսված ներդրումները՝ 134,0%-ով:

Հաշվի առնելով վերը նշվածը, պետք է եզրակացնել, որ «ՀայՌուսագաղարդ» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային ծրագիրը հիմնականում կատարվել է: Չնայած այն հանգամանքին, որ առկա են եղել մաս ուղղություններ որոնցով ներդրումներ չեն իրականացվել կամ կատարման ցուցանիշը բավական ցածր է եղել, ներդրումային ծրագրի հիմնական գերակա ուղղությունը կատարվել է 134,0%-ով:

Արդեն ուժի մեջ է մտել և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատվել է «ՀայՌուսագաղարդ» փակ բաժնետիրական ընկերության 2007-2009 թվականների ներդրումային ծրագիրը:

Այդ ծրագրի համաձայն «ՀայՌուսագաղարդ» փակ բաժնետիրական ընկերության 2007-2009 թվականների իր ներդրումային ծրագրում նախատեսում է ներդրումներ՝ 68232,6 մլն դրամ ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից 2007 թվականին՝ 40295,1 մլն դրամ, հետևյալ ուղղություններով.

- 1) գազափոխադրման համակարգի ընդլայնում 2007-2009 թվականների ընթացքում՝ 51999,8 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 32981,8 մլն դրամ,
- 2) գազափոխադրման համակարգում Արժույթի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և ընդլայնում 2007-2009 թվականների ընթացքում՝ 5011,2 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 1427,0 դրամ,

<sup>1</sup> Աղյուսակի կազմման համար հիմք է հանդիսացել «ՀայՌուսագաղարդ» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, վերլուծական տեղեկանք, ՀՀ Հանրային ծառայությունները կանոնակարգող հանձնաժողով, Երևան 2006:

- 3) գազափոխադրման համակարգի վերակառուցում 2007-2009 թվականների ընթացքում՝ 1580,7 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 900,7 մլն դրամ,
- 4) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ 2007-2009 թվականների ընթացքում՝ 314,7 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 204,8 մլն դրամ,
- 5) գազաբաշխման համակարգի ընդլայնում՝ 2007-2009 թվականների ընթացքում՝ 3216,7 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 1816,7 մլն դրամ,
- 6) գազաբաշխման համակարգի վերակառուցում 2007-2009 թվականների ընթացքում՝ 3443,8 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 1295,6 մլն դրամ,
- 7) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ 2007-2009 թվականների ընթացքում՝ 2665,6 մլն դրամ, որից 2007 թվականին՝ 1668,5 մլն դրամ<sup>1</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանձնարարվել է «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2007 թվականի նոյեմբերի 1-ը Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ընկերության 2008-2010 թվականների ներդրումային ծրագիրը:

Այսպիսով՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2007-2009 թվականների ընթացքում հսկայածավալ ներդրումներ են նախատեսում հիմնականում գազափոխադրման և գազապահեստավորման կառուցման բնագավառներում, որոնք Հայաստանի մեծ երկրի համար ունեն ռազմավարական և տնտեսական անվտանգության տեսանկյունից բավականին մեծ նշանակություն: Նման ներդրումները ունեն բազմաթիվ նշանակություն և դրանց տնտեսական արդյունքներն ավելի ակնհայտ են դառնում յուրաքանչյուր տարի:

## ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քորանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող, աշխ. գ.թ. պրոֆեսոր*

## ՀՀ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության տարածքի բնական պայմանները և ռեսուրսները նրա տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալներն են, որոնց ճիշտ և խնայողաբար օգտագործումից է կախված հանրապետության բնակչության նյութական պահանջարկի բավարարումը և բարեկեցիկ կյանքը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության անցումը կենտրոնացված պլանավորումից դեպի շուկայական տնտեսական հարաբերություններ կոչված էր կարճատև, միջին և երկարատև հեռանկարում բարելավելու երկրի ոչ միայն տնտեսական վիճակը, այլև նպաստելու նրա բնական միջավայրի էկոլոգիական իրավիճակի կայունացմանը: Շուկայական հարաբերություններն իրենց մեջ ներառում են օրենքների, ֆինանսական ներդրումների, հարկերի, տուգանքների և պատիժների մի այնպիսի համակարգ, որը կրացառի կամ նվազագույնի կհասցնի բնական ռեսուրսների շռայլումը և գիշատիչ շահագործումը՝ դրանով իսկ պահպանելով բնական միջավայրը մարդածին և տեխնածին աղտոտվածությունից, և մարդկանց համար կստեղծվեն առողջ կենսապայմաններ: Այդ հիմնախնդիրների լուծումն անհրաժեշտ է ոչ միայն ներկա բնակչության, այլև գալիք սերունդների համար, որոնց վրա կախվել է էկոլոգիական ճգնաժամի իրական սպառնալիքը:

Գնալով համընդհանուր ձևով վատթարանում է շրջակա բնական միջավայրի աղտոտվածությունը: Այդ կապակցությամբ առաջ է գալիս միջոցառումների խիստ անհրաժեշտություն, որոնք կապահովեն մարդկանց առողջությունը, շատ թե քիչ չափով կբարձրացնեն նրանց կենսաապրելակերպը և աշխատանքային գործունեությունը:

Ժամանակակից բնօգտագործման և բնապահպանական քաղաքականությունն ուղղված է ազգային, տարածաշրջանային և գլոբալ բնապահպանական հիմնահարցերի լուծմանը՝ կապված էկոլոգիական անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի, կյանքի և մարդկանց առողջության բարելավման խնդիրների հետ: Հիմնահարցերի մեծ համադրումը ներկայումս կայուն էկոլոգատնտեսական զարգացման հայեցակարգի շրջանակներում ստացել է նոր՝ գիտական հիմնավորում: Կայուն զարգացման գաղափարախոսությունը վերածվել է կոնկրետ ռազմավարական գործողությունների, որոնք պետք է ունենան համապատասխան գիտական հենք: Նման գաղափարախոսության ընդունումը զարգացող երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի կողմից, ըստ էության, նշանակում է միացում բոլոր այն գիտագործնական քայլերին, որոնք ուղղված են տնտեսական գործունեության համընդհանուր էկոլոգայնացմանը:

Տարբեր երկրների փորձի վերլուծությունները վկայում են, որ անհնար է ապահովել կայուն տնտեսական զարգացում բնական միջավայրի քայքայման ու բնական ռեսուրսների հյուծման հաշվին, ինչպես նաև, առանց հզոր տնտեսության՝ պահպանել միջավայրի, հետևաբար նաև հասարակական կյանքի անհրաժեշտ որակը<sup>2</sup>:

Շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունն իր հերթին ենթադրում է տնտեսական ակտիվության նոր որակի ապահովում, նպաստում լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, մասնավորապես, էկոլոգիական ուղղվածության ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը: Այսպիսով, հաստատվում է այն դրույթը, որ տնտեսության զարգացումն անհրաժեշտ պայման է գերակա էկոլոգիական հիմնահարցերի

<sup>1</sup> [www.armrusgasprom.am](http://www.armrusgasprom.am)

<sup>2</sup> Лукьянченков Н.Н., Потравный И.М. Экономика и организация природопользования — М.: Тройка, 2000, -456с.